ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԱՍ A

ԳՈՐԾԻ ԱՆՈՒՆԸ	ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ
ՇՐՋԱՆԻ	ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱՆՈՒՆԸ

Կարդացեք ստորև բերված կանոնները և Ձեր անվան սկզբնատառերը դրեք յուրաքանչյուրի դիմաց:

Անվան սկզբնատառերը	Ես հասկանում եմ, որ՝
	Գումարները պետք է գտնվեն ֆինանսական հիմնարկությունում, օրինակ՝ բանկում, վարկային միությունում, խնայողության կամ փոխատվության տեսքով և այլն, և իմ Սահմանափակ հաշվի վրա գտնվող ողջ գումարը պետք է առանձնացված լինի այլ հաշիվներից:
	Ես պետք է հաշվի մասին տեղեկության ապացույց ներկայացնեմ: Հաշվի մասին տեղեկության որոշ օրինակներ են՝ ● բանկի քաղվածքը կամ բանկից, վարկային միությունից ստացած փաստաթուղթը, որի վրա նշված են բանկի անվանումն ու հասցեն. ● Սահմանափակ հաշվի պայմանագիրը ստորագրելու օրվանից հետո ստացված բոլոր հաշվեկշիռները և գործարքները. ● հաշվի/հաշիվների վրա նշված անուն(ներ)ը:
	Ես հասկանում եմ, որ ստորև նշված են այն բանի ապացույցի որոշ օրինակներ, թե ինչ կերպ եմ ես ծախսել Սահմանափակ հաշվից/հաշիվներից հանված գումարները. ● չեղարկված վճարագիր/վճարագրեր. ● ապրանք կամ ծառայություն տրամադրողի կողմից ստորագրված փաստաթուղթ/փաստաթղթեր, որի/որոնց վրա նշված է, թե ինչի համար և որքան գումար է վճարվել. ● ստացական(ներ):
	Այս Սահմանափակ հաշվի պայմանագիրը դադարեցվում է՝ ● երբ ես աշխատակցին ապացույց չեմ ներկայացնում Սահմանափակ հաշվի մասին. ● երբ իմ ընտանիքը դադարում է սննդամթերքի կտրոնների նպաստներ ստանալ. ● երբ Սահմանափակ հաշիվը փակվում է. ● եթե փոխվում է Սահմանափակ հաշիվների մասին օրենքը:
	Սահմանափակ հաշվի վրա պահվող խնայողությունների առավելագույն սահմանաչափ գոյություն չունի: Ես կարող եմ մեկից ավելի սահմանափակ հաշիվ ունենալ, և իմ բոլոր սահմանափակ հաշիվների վրա եղած գումարները չեն ազդում իմ ընտանիքի միջոցների սահմանաչափի վրա:
	Եթե որևէ պատճառով ես դադարեմ սննդամթերքի կտրոններ ստանալուց և կրկին դիմեմ սննդամթերքի կտրոններ ստանալու համար, և նպաստներն ընդհատվեն, ապա իմ հաշվառվող միջոցների, այդ թվում՝ Սահմանափակ հաշվի/հաշիվների վրա եղած միջոցների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել միջոցների $2,000/$3,000 սահմանաչափը: Նոր Սահմանափակ հաշիվ բացելու համար դիմելիս ես պետք է Սահմանափակ հաշվի նոր պայմանագիր կնքեմ: Սահմանափակ հաշվի պայմանագիրն անհրաժեշտ է, եթե օգնությունն ընդհատվում է:
	Եթե իմ Սահմանափակ հաշվից/հաշիվներից գումար է հանվում և օգտագործվում ոչ թույլատրելի ծախսեր հոգալու նպատակով, եթե անգամ դրանք մահվան կամ կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում պահանջվող ծախսեր են, այդ հանումը կկատարվի իմ միջոցների սահմանաչափի հաշվին, և շրջանը կվերահաշվարկի բոլոր միջոցները:
	Իմ միջոցների $2,000 սահմանաչափին ($3,000, եթե ընտանիքում հաշմանդամ/60 տարեկան կամ ավելի տարեց որևէ անձ կա) մոտ գումար ունենալու անհրաժեշտությունը՝ արտակարգ իրավիճակներում կամ այլ նպատակներով ծախսելու համար՝ նախքան Սահմանափակ հաշիվ բացելը:
	Եթե ես եռամսյակը մեկ եմ հաշվետվություն ներկայացնում եկամուտի և ընտանիքի ծախսերի մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին և եռամսյակի ընթացքում գումար եմ հանում հաշվից, ես պետք է այդ հանված գումարի մասին զեկուցեմ եկամուտի մասին հաջորդ հաշվետվության մեջ: Եթե ես եռամսյակը մեկ հաշվետվություն ներկայացնող ընտանիք չեմ, ապա պետք է հաշվից հանված գումարի մասին զեկուցեմ գումարը հանելուց հետո 10 օրվա ընթացքում:
	Իմ Սահմանափակ հաշվի/հաշիվների վրա գոյացած տոկոսը պետք է ուղղակիորեն դրվի այդ հաշվի/հաշիվների վրա: Եթե տոկոսն ուղարկվում է ինձ, ես պետք է այն ետ դնեմ Սահմանափակ հաշվի վրա:
	Սահմանափակ հաշվի վրա խնայված գումարը կարող է օգտագործվել մեկ կամ ավելի թույլատրելի ծախսերի նպատակով, որոնք ուղղակիորեն կապված են՝ ● իմ բնակության համար տուն գնելու հետ, ● նոր գործ սկսելու հետ, ● հաշվետիրոջ կամ նրա խնամյալ(ներ)ի ուսման կամ մասնագիտական պատրաստության հետ:

Հավաստագիր

Ես կարդացել եմ այս տեղեկատվական թերթիկը: Ես հասկանում եմ կանոնները և իմ պարտականությունները և վերը դրել եմ իմ անվան սկզբնատառերը՝ Սահմանափակ հաշիվ բացելու և պահելու համար, և իմ միջոցների $2,000 սահմանաչափին ($3,000, եթե ընտանիքում հաշմանդամ/60 տարեկան կամ ավելի տարեց որևէ անձ կա) մոտ գումար ունենալու անհրաժեշտությունը՝ արտակարգ իրավիճակներում կամ այլ նպատակներով ծախսելու համար՝ նախքան **Սահմանափակ հաշիվ** բացելը: Եթե ես համոզված չլինեմ այն բանում, թե ինչն է հանդիսանում թույլատրելի ծախս, ինչ ապացույցների կարիք կա և երբ պետք է ապացույցը ներկայացվի շրջանին, ես այդ մասին կհարցնեմ իմ աշխատակցից:

ԸՆՏԱՆԻՔԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԿԱՄ ԳԼԽԱՎՈՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՆՇԱՆԸ	ԱՄՍԱԹԻՎԸ
ՎԿԱՅԻ ԵՎ/ԿԱՄ ԹԱՐԳՄԱՆԻՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՆՇԱՆԸ	ԱՄՍԱԹԻՎԸ